# Open Government Partnership
# Independent Reporting Mechanism

# Action Plan Review: Armenia 2022-2024
# Comments Received

**Comments Received from Ani Harutyunyan (1 June 2023):**

**Commitment 5**
Յանձնառությունը բավականին տրանսֆորմատիվ է, քանի որ, չնայած մասնակցային բյուջետավորման գործընթացի ուղեցույցներն ու գործիքները սկզբում թերևս հայեցողական սկզբունքով են լինելու, սակայն առկա պրակտիկան ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն կիրառվում են պիլոտային համայնքների կողմից, այլ նաև կամավոր սկզբունքով այլ համայնքների կողմից նույնպես, ինչպես օրինակ, Ջերմուկ համայնքը: Բացի այդ, այս հանձնառությունը օժանակվում է և կարող է օժանդակվել տեղական ԲԿԳ ծրագրերով նույնպես, ինչն էլ, իր հերթին, կարող է արդյունքին միտված ներուժը զգալի դարձնել:

**Commitment 8**
Չնայած հանձնառությունը չի ենթադրում օրենսդրական փոփոխություն, սակայն շատ բովանդակալից առաջարկում է ՏՅՏ լուծում՝ տվյալների ավտոմատացված հրապարակում, մեքենայական ընթերցման հասանելիություն, գնումների թղթային ձևաչափից էլեկտրոնային եղանակի անցում, որը կբերի պետական ծախսերի թափանցիկության, հաշվետվողականության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և ինովացիան լուծումների, որոնց շնորհիվ էլ, կարծում եմ, հանձնառությունը կարող է ավելի հավակնոտ համարվել:

**Comment Received from Armen Khudaverdyan (26 May 2023):**

**Commitment 7**
հանրային պաշտոն զբաղեցնող նաձանց և ծառայողների տարեկան, պաշտոնի ստանձնման/դադարեցման և ընտանիքի անդամի հայտարարագրերում անհրաժեշտ է ստեղծել նվերների բաժին՝ խմբավորելով տարբեր բաժիններից նվերների տեսքով ստացված գույքի տեսակները և դրամական միջոցները: Սա կհեշտացնի հայտարարագրերից նվերների ռեեսդր տվյալների փոխանցումը և փոխարկելիությունը: